ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
«ՆՈՅԱԿԵՐՏԻ ԱԱՊ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ МАРЗ
«НОЯКЕРТСКИЙ ЦЕНТР ПСЗ»
ЗАО

Գ. Նոյակերտ — с. Ноякерт

«-25-»12-2014 թ.

Հեռ. /0234/62108 — Тел /0234/62108
Էլ. Փոստ noyakertaapk@mail.ru — эл. почта noyakertaapk@mail.ru

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր մասնակիցների
ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Նոյակերտի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում ______ ՆԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-2015/1

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել «Նոյակերտի ԱԱՊԿ» ՓԲԸ, ՀՀ Արարատի մարզ, գ.Նոյակերտ, Անդրանիկի 15/1 հասցեով, ընդունարան, մինչև 2015թ հունվարի 16-ը, ժամը 10:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գևորգ Ամիրջանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Նոյակերտի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի շենքում, ՀՀ Արարատի մարզ, գ. Նոյակերտ, Անդրանիկի 15/1 հասցեով, ընդունարանում, 2015թ. Հունվարի 16-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Նոյակերտի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերումը:
«Նոյակերտի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 59 չափաբաժիններից). տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներակայացված է հրավերի (ծանուցման) N1 հավելվածում: Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված.

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5). ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն.

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ -11/4» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակիցների կողմից որպես համարժեք ապրանքներ ներկայացնելու դեպքում գնային առաջարկում ներառել նաև դրանց տեխնիկական բնութագրերի նկարագրությունները, պարտադիր նշելով «համարժեք» բառը:

Հայտնում ենք որ, հրավերով ներկայացվող դեղորայքի տեխնիկական բնութագրերի /քիմիական կազմի/հիման վրա Ձեր գնառաջարկում անհրաժեշտ է պարտադիր կերպով ներկայացնել հստակ այն դեղատեսակն /դեղորայքի անվանում, չափման միավոր, փաթեթավորում/ որը հաղթելու պարագայում կնշվի գնման պայմանագրում, և կմնա անփոփոխ պայմանագրի գործողության ողջ ընթացքում:

**Անհրաժեշտ պայման է Մատակարարի գտնվելը Նոյակերտ գյուղից 7կմ շառավղով հեռավորությամբ , քանի որ հիվանդները դեղորայքը պետք է ստանան դեղատնից դեղատոմսերով և ամսվա վերջին պետք է կազմվի ռեստր:**

Ներկայացված ցանկից դեղորայքի որոշ քանակություն մատակարարվելու է անմիջապես պատվիրատուին՝ ըստ պահանջի և քանակի, հաշիվ ապրանքագրերով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

« Նոյակերտի ԱԱՊԿ » **ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝** noyakertaapk@mail.ru

Հարգանքով՝

Տնօրեն՝ Ա. Սիմոնյան

Կատարող՝ Գնումների համակարգող
Գևորգ Ամիրջանյան հեռ. 091277156